# ՔԱՂՎԱԾՔ

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝**
**2021 թվականի հունիսի 24-ի, ժամը 12:00-ի նիստի**
**N 12 արձանագրությունից**

**ԼՍԵՑԻՆ.-** Դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու Եվգենյա Արայիկի Բազինյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

Զեկուցողը նշեց. Եվ.Ա.Բազինյանը 2005 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնում. նախ՝ դասախոս, իսկ 2013 թվականի սեպտեմբերի 3-ից՝ ասիստենտ: Այդ տարիների ընթացքում իրականացրել է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն: Եվ.Ա.Բազինյանը 2019 թվականի սեպտեմբերի 9-ից զբաղեցնում է համալսարանի ասպիրանտուրայի բաժնի պետի պաշտոնը, միաժամանակ, համատեղությամբ շարունակում է դասավանդել ամբիոնում:

Եվ.Ա.Բազինյանը 2016 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում նա հրատարակել է 10 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք (1 ուսումնական ձեռնարկ՝ համահեղինակությամբ, 1 դասախոսությունների նյութեր, 1 կոլեկտիվ մենագրություն, 5 գիտական հոդված՝ տպագրված ՀՀ գիտական ամսագրերում (այդ թվում 4-ը՝ համահեղինակությամբ), 2 գիտական հոդված՝ տպագրված միջազգային գիտական ամսագրերում):

Եվ.Ա.Բազինյանը դասախոսությունները և գործնական պարապմունքները վարում է բարձր մակարդակով: Վայելում է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հարգանքը:

Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնը և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը միաձայն երաշխավորել են Եվ.Ա.Բազինյանին՝ մասնակցելու գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով:

**Քվեարկության արդյունքներն են.** գիտական խորհրդի 60 անդամից քվեարկությանը մասնակցել են 58-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 56, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 2:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-**

1. Հաշվի առնելով, որ **տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու Եվգենյա Արայիկի Բազինյանի** կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ կառավարության՝ 2001 թվականի հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» 2-րդ գլխի 5-րդ կետի «բ)» ենթակետի պահանջներին՝ **Եվգենյա Արայիկի Բազինյանին** շնորհել **դոցենտի** գիտական կոչում՝ **«Տնտեսագիտություն»** բնագավառի **Ը.00.08՝ «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում»** մասնագիտությամբ:

2. **Միջնորդել Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:**

**Գիտական խորհրդի նախագահ՝** **Դ. Ռ. Գալոյան**

**Գիտական խորհրդի քարտուղար՝** **Ն. Հ. Դարբինյան**

2021 թ. հունիսի 24

Երևան